***ՎԱՐԴԵՆԻՍ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 07 ՀՈՒՆԻՍ 2022 ԹՎԱԿԱՆԻ «ՎԱՐԴԵՆԻՍ ՀԱՄԱՅՔՆԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ ՀՈՂԱՄԱՍԵՐԸ ՎԱՐՁԱԿԱԼՈՒԹՅԱՆ ԿԱՄ ԿԱՌՈՒՑԱՊԱՏՄԱՆ ԻՐԱՎՈՒՆՔՈՎ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՆՊԱՏԱԿՈՎ ՄՐՑՈՒՅԹՆԵՐԻ ԿԱԶՄԱԿԵՐՊՄԱՆ ՀԱՄԱՐ ՄՐՑՈՒԹԱՅԻՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ ՍՏԵՂԾԵԼՈՒ ՄԱՍԻՆ» N 53-Ա ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ***

*(Զեկ. ԱՇԱՐՈՆ ԽԱՉԱՏՐՅԱՆ)*

Ղեկավարվելով «Նորմատիվ իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 33-րդ, 34-րդ հոդվածների դրույթներով և ելնելով անհրաժեշտությունից՝ համայնքի ավագանին **որոշում է.**

1.Վարդենիս համայնքի ավագանու 07 հունիս 2022 թվականի <<Վարդենիս համայնքի սեփականություն հանդիսացող հողամասերը վարձակալության կամ կառուցապատման իրավունքով տրամադրելու նպատակով մրցույթների կազմակերպման համար մրցութային հանձնաժողով ստեղծելու մասին>> N 53-Ա որոշման բովանդակության մեջ կատարել հետևյալ փոփոխությունը.

1) 2-րդ կետում «Արգար Արգարյան» բառերը փոխարինել «Գուրգեն Մնացականյան» բառերով

2) 3-րդ կետում «Հրանտ Զարոյան» բառերը փոխարինել «Կորյուն Գևորգյան» բառերով:

2.Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման պահից:

Համայնքի ղեկավարն առաջարկեց, անհրաժեշտությունից ելնելով, Վարդենիս համայնքի ավագանու 07 հունիս 2022 թվականի <<Վարդենիս համայնքի սեփականություն հանդիսացող հողամասերը վարձակալության կամ կառուցապատման իրավունքով տրամադրելու նպատակով մրցույթների կազմակերպման համար մրցութային հանձնաժողով ստեղծելու մասին>> N 53-Ա որոշման բովանդակության մեջ կատարել հետևյալ փոփոխությունը.

1) 2-րդ կետում «Արգար Արգարյան» բառերը փոխարինել «Գուրգեն Մնացականյան» բառերով

2) 3-րդ կետում «Հրանտ Զարոյան» բառերը փոխարինել «Կորյուն Գևորգյան» բառերով:

Առարկություններ և առաջարկություններ չեղան:

21 կողմ, 0 դեմ, 0 ձեռնպահ ձայների հարաբերակցությամբ հարցն ընդունվեց:

Կողմ-21 Դեմ-0 Ձեռնպահ-0

Որոշումն ընդունված է. *(կցվում է որոշում N 76-Ա)*

LՍԵՑԻՆ

***ՀՀ ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ ՎԱՐԴԵՆԻՍ ՀԱՄԱՅՆՔԻ ՎԱՆԵՎԱՆ ԲՆԱԿԱՎԱՅՐՈՒՄ 5 ՄՎՏ ՀԶՈՐՈՒԹՅԱՄԲ ԱՐԵՎԱՅԻՆ ՖՈՏՈՎՈԼՏԱՅԻՆ ԷԼԵԿՏՐԱԿԱՅԱՆԻ ԿԱՌՈՒՑՄԱՆ ՆՊԱՏԱԿՈՎ ՆԱԽԱՏԵՍՎՈՂ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆԸ ՆԱԽՆԱԿԱՆ ՀԱՄԱՁԱՅՆՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ***

*(Զեկ. ԱՀԱՐՈՆ ԽԱՉԱՏՐՅԱՆ)*

Ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին>> ՀՀ օրենքի 42-րդ հոդվածի, <<Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման և փորձաքննության մասին>> ՀՀ օրենքի 11-րդ հոդվածի և 16-րդ հոդվածի 3-րդ կետի դրույթներով, հիմք ընդունելով ՀՀ Գեղարքունիքի մարզի Վարդենիս համայնքի Վանևան բնակավայրում «ՍՈԼԱՐ ՍԹԱՐ ԻՔՍ» ՍՊԸ-ի կողմից 5 ՄՎտ հզորությամբ արևային ֆոտովոլտային էլեկտրակայան կառուցելու վերաբերյալ 2025 թվականի մայիսի 22-ին կայացած հանրային լսման արձանագրությունը՝ համայնքի ավագանին **որոշում է.**

1.Տալ նախնական համաձայնություն՝ ՀՀ Գեղարքունիքի մարզի Վարդենիս համայնքի Վանևան բնակավայրում «ՍՈԼԱՐ ՍԹԱՐ ԻՔՍ» ՍՊԸ-ի կողմից 5 ՄՎտ հզորությամբ արևային ֆոտովոլտային էլեկտրակայանի կառուցման նպատակով նախատեսվող գործունեության իրականացմանը:

2.Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման պահից:

Համայնքի ղեկավարը առաջարկեց տալ նախնական համաձայնություն՝ ՀՀ Գեղարքունիքի մարզի Վարդենիս համայնքի Վանևան բնակավայրում «ՍՈԼԱՐ ՍԹԱՐ ԻՔՍ» ՍՊԸ-ի կողմից 5 ՄՎտ հզորությամբ արևային ֆոտովոլտային էլեկտրակայանի կառուցման նպատակով նախատեսվող գործունեության իրականացմանը:

Առարկություններ և առաջարկություններ չեղան:

Քվեարկության արդյունքում 21 կողմ, 0 դեմ, 0 ձեռնպահ ձայների հարաբերակցությամբ հարցն ընդունվեց:

Կողմ-21 Դեմ-0 Ձեռնպահ-0

Որոշումն ընդունված է. *(կցվում է որոշում N 75-Ա)*

LՍԵՑԻՆ

***ՎԱՐԴԵՆԻՍ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 24 ՀՈՒՆՎԱՐԻ 2025 ԹՎԱԿԱՆԻ «ՀՀ ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ ՎԱՐԴԵՆԻՍ ՀԱՄԱՅՆՔԻ ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՈՉ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ /ՀՈԱԿ-ՆԵՐ/ ԵՎ ԲՅՈՒՋԵՏԱՅԻՆ ՀԻՄՆԱՐԿՆԵՐԻ ԱՇԽԱՏԱԿԻՑՆԵՐԻ ԹՎԱՔԱՆԱԿԸ, ՀԱՍՏԻՔԱՑՈՒՑԱԿԸ ԵՎ ՊԱՇՏՈՆԱՅԻՆ ԴՐՈՒՅՔԱՉԱՓԵՐԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ» N 6-Ա ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ԼՐԱՑՈՒՄ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ***

*(Զեկ. ԱՀԱՐՈՆ ԽԱՉԱՏՐՅԱՆ)*

Ղեկավարվելով «Նորմատիվ իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 33-րդ և 34-րդ հոդվածների, <<Տեղական ինքնակառավարման մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 18 -րդ

հոդվածի 1-ին մասի 28-րդ կետի դրույթներով, հիմք ընդունելով համայնքի ղեկավարի առաջարկությունը՝ համայնքի ավագանին **որոշում է.**

1.Վարդենիս համայնքի ավագանու 2025 թվականի հունվարի 24-ի «ՀՀ Գեղարքունիքի մարզի Վարդենիս համայնքի համայնքային ոչ առևտրային կազմակերպությունների /ՀՈԱԿ-ներ/ և բյուջետային հիմնարկների աշխատակիցների թվաքանակը, հաստիքացուցակը և պաշտոնային դրույքաչափերը հաստատելու մասին» N 6-Ա որոշման մեջ կատարել փոփոխություն՝ որոշման հավելվածի

ա)«ՀՀ Գեղարքունիքի մարզի Վարդենիս քաղաքի թիվ 2 ՄԵԴ» ՀՈԱԿ բաժնում «տնօրենի տեղակալ»-ի <<0.5>> միավորը փոխարինել <<1.0>> միավորով՝ համաձայն հավելվածի:

բ) «ՀՀ Գեղարքունիքի մարզի Վարդենիսի թիվ 1 մանկապարտեզ» ՀՈԱԿ բաժնում՝ ավելացնել «հոգեբան»-ի հաստիք՝ համաձայն հավելվածի:

գ) «ՀՀ Գեղարքունիքի մարզի Վարդենիսի կոմունալ տնտեսություն և բարեկարգում» ՀՈԱԿ բաժնում ավելացնել «էլեկտրիկ»-ի հաստիք համաձայն հավելվածի:

2.Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման պահից:

Հարցը ներկայացրեց համայնքի ղեկավարը՝ առաջարկելով Վարդենիս համայնքի ավագանու 2025թ. հունվարի 24-ի <<ՀՀ Գեղարքունիքի մարզի Վարդենիս համայնքի համայնքային ոչ առևտրային կազմակերպությունների /ՀՈԱԿ-ներ/ և բյուջետային հիմնարկների աշխատակիցների թվաքանակը, հաստիքացուցակը և պաշտոնային դրույքաչափերը հաստատելու մասին>>> N 6-Ա որոշման մեջ կատարել փոփոխություն՝ համաձայն որոշման հավելվածների

ա)«ՀՀ Գեղարքունիքի մարզի Վարդենիս քաղաքի թիվ 2 ՄԵԴ» ՀՈԱԿ բաժնում «տնօրենի տեղակալ»-ի <<0.5>> միավորը փոխարինել <<1.0>> միավորով՝ համաձայն հավելվածի:

բ) «ՀՀ Գեղարքունիքի մարզի Վարդենիսի թիվ 1 մանկապարտեզ» ՀՈԱԿ բաժնում՝ ավելացնել «հոգեբան»-ի հաստիք՝ համաձայն հավելվածի:

գ) «ՀՀ Գեղարքունիքի մարզի Վարդենիսի կոմունալ տնտեսություն և բարեկարգում» ՀՈԱԿ բաժնում ավելացնել «էլեկտրիկ»-ի հաստիք՝ համաձայն հավելվածի:

Ելույթ ունեցավ ավագանու անդամ Նաիրա Մանուչարյանը՝ նշելով, որ ՄԵԴ-երում շատ մեծ առաջընթաց կա, ինչպես նաև առաջարկեց հետագայում մանկապարտեզներում նախատեսել լոգոպեդի հաստիքներ:

Այլ առաջարկություններ և առարկություններ չեղան:

Քվեարկության արդյունքում 21 կողմ, 0 դեմ, 0 ձեռնպահ ձայների հարաբերակցությամբ հարցն ընդունվեց:

Կողմ-21 Դեմ-0 Ձեռնպահ-0

Որոշումն ընդունված է. *(կցվում է որոշում N 74-Ա)*

ԼՍԵՑԻՆ

***ՎԱՐԴԵՆԻՍ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ <<ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ ՎԱՐԴԵՆԻՍ ՀԱՄԱՅՆՔԻ 2025 ԹՎԱԿԱՆԻ ՏԱՐԵԿԱՆ ԲՅՈՒՋԵՆ ՔՆՆԱՐԿԵԼՈՒ ԵՎ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ>> 24 ՀՈՒՆՎԱՐԻ 2025 ԹՎԱԿԱՆԻ N 3-Ն ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ***

***(Զեկ. ԴԱՎԻԹ ՇԱՀՆԱԶԱՐՅԱՆ)***

Ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 5-րդ կետի, <<Նորմատիվ իրավական ակտերի մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 33-րդ և 34-րդ հոդվածների դրույթներով, հաշվի առնելով Վարդենիս համայնքի ավագանու <<Միասնական Վարդենիս>> խմբակցության ղեկավար Դավիթ Վանոյի Շահնազարյանի առաջարկությունը «ՀՀ Գեղարքունիքի մարզի Վարդենիս քաղաքի Միեր Մկրտչյանի անվան մշակույթի պալատ» ՀՈԱԿ-ում հանդերձարանի ընթացիկ նորոգման աշխատանքներ իրականացնելու մասին՝ համայնքի ավագանին **որոշում է.**

1.Վարդենիս համայնքի ավագանու <<Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզի Վարդենիս համայնքի 2025 թվականի տարեկան բյուջեն քննարկելու և հաստատելու մասին>> 24 հունվարի 2025 թվականի N 3-Ն որոշման հավելվածներում կատարել հետևյալ փոփոխությունները.

համայնքի վարչական բյուջեի 01.01.51 գործառնական դասակարգման 4251 տնտեսագիտական դասակարգման հոդվածից պակասեցնել 800 000 (ութ հարյուր հազար ) ՀՀ դրամ՝ այն ավելացնել 09.05.01 դասակարգման «ՀՀ Գեղարքունիքի մարզի Վարդենիս քաղաքի Միեր Մկրտչյանի անվան մշակույթի պալատ» ՀՈԱԿ-ի նախահաշվում՝ 4251 տնտետեսագիտական հոդվածով:

2.Ծույլատրել համայնքի ղեկավարին՝ համաձայն Դավիթ Շահնազարյանի առաջարկության «ՀՀ Գեղարքունիքի մարզի Վարդենիս քաղաքի Միեր Մկրտչյանի անվան մշակույթի պալատ» ՀՈԱԿ-ում հանդերձարանի ընթացիկ նորոգման աշխատանքների համար հատկացնել ավելացված 800 000 (ութ հարյուր հազար ) ՀՀ դրամը:

3.Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակմանը հաջորդող օրվանից:

Համայնքի ղեկավարը նշեց որ <<ՎԱՐԴԵՆԻՍ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ <<ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ ՎԱՐԴԵՆԻՍ ՀԱՄԱՅՆՔԻ 2025 ԹՎԱԿԱՆԻ ՏԱՐԵԿԱՆ ԲՅՈՒՋԵՆ ՔՆՆԱՐԿԵԼՈՒ ԵՎ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ>> 24 ՀՈՒՆՎԱՐԻ 2025 ԹՎԱԿԱՆԻ N 3-Ն ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ

ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ>> հարցը կներկայացնի որոշման նախագծի հեղինակ, <<Միասնական Վարդենիս>> Խմբակցության ավագանու անդամ Դավիթ Շահնազարյանը: Դավիթ Շահնազարյանը մինչև նախագծին անցնելը շնորհավորանքով հանդես եկավ առաջին հանրապետության տոնի առթիվ, ինչպես նաև շնորհավորանքների շարքը շարունակելով նշեց, որ նախկին գործընկերը այժմ մշակույթի պալատի տնօրենն է և իր առաջին միջնորդությունն է ներկայացրել մշակույթի պալատում որոշակի վերանորոգման աշխատանքներ իրականացնելու վերաբերյալ: Մեր մշակութային հիմնական օբյեկտը Վարդենիսի Միեր Մկրտչյանի անվան մշակույթի պալատն է, բայց ցավոք սրտի ունի անմխիթար վիճակում գտնվող հանդերձասրահ: Նախագծի նպատակն է, որպեսզի մենք կարողանանք բյուջեի մեջ որոշակի փոփոխություն ներկայացնելով, բյուջեից նախատեսենք ութ հարյուր հազար դրամ գումար, որը կուղղվի Միեր Մկրտչյանի անվան մշակույթի պալատ ՀՈԱԿ - ի ընթացիկ նորոգման աշխատանքների համար և որի արդյունքում մենք կունենանք 450 նստատեղ ունեցող մշակութային այս օբյեկտի համար կահավորված հանդերձասրահ և յուրաքանչյուր մուտք գործող մարդու համար առաջինը տեսադաշտում կերևա հանդերձասրահը, նորմալ և կահավորված տեսքով կլինի, դրա համար առաջարկեց առաջին կետով կատարել փոփոխություն բյուջեում՝ հատկացնել ութ հարյուր հազար դրամը, որն էլ ուղղել երկրորդ կետով՝ «ՀՀ Գեղարքունիքի մարզի Վարդենիս քաղաքի Միեր Մկրտչյանի անվան մշակույթի պալատ» ՀՈԱԿ-ին նշված նպատակն իրականացնելու համար:

Ելույթով հանդես եկավ <<Քաղաքացիական պայմանագիր>> խմբակցության ավագանու անդամ Նաիրա Մանուչարյանը՝ իր խոսքում միանալով շնորհավորանքներին և խոսեց նախորդ օրը կայացած միջոցառման մասին, նշեց որ թոռնիկների հետ լուսանկարվել է հանդերձարանի ֆոնին:

Նաիրա Մանուչարյանը հարց ուղղեց, թե ինչո՞ւ հենց հիմա, երբ մեր գործընկերը, ձեր թիմակիցը՝ Նելլի Խաչատրյանը, ում շնորհավորում և հաջողություն է մաղթում, կախված է նրանից որ ի՞նքն է ղեկավարում, թ՞ե Արմեն Խաչատրյանի օրոք հանդերձարանը անհրաժեշտ չէր:

Հարցին ի պատասխան Դավիթ Շահնազարյանը նշեց, որ որևէ այլ միտում չկա քան օգնել մշակույթի պալատին լիարժեք զարգանալու և բնականոն ընթացք ապահովելու համար: Ինչ վերաբերվում է խնդրին, խնդիրը ներկայացրել է նորանշանակ տնօրենը և այնպես չէ, որ բոլոր ՀՈԱԿ-ների Վարդենիսի բոլոր խնդիրներից տեղյակ է: Երբ լինում են առաջարկություններ, անկախ նրանից որ բնակավայրում է և որ ՀՈԱԿ-ում է, միշտ այցելում է և ովքեր որ հետևում են իր գործունեությանը տեսել են, որ պարբերաբար և բնակավայրեր է այցելում և երբ որ խնդիրներ են առաջանում՝ պարբերաբար ներկայացնում է այդ խնդիրները: Նորանշանակ տնօրենը ներկայացրել է այդ խնդիրը, ցույց է տվել հանդերձարանի վիճակը, /ինչպես Մանուչարյանն իր խոսքում նշել է, որ լուսանկարվել է արդեն մաքրված ֆոնին/: Դավիթ Շահնազարյանը նշեց, որ տեսել է մինչև մաքրված վիճակը և արդեն մաքրված, ավելացնելով, որ շատ գովելի է, որ նորանշանակ տնօրենը ոչ միայն խնդիրն է ներկայացնում այլ նաև խնդրին ուղղված ջանքեր է ներդնում՝ մաքրել, նախապատրաստել և ցույց է տվել տարբերությունները: Նպատակը այն է որ մշակութային օջախում հոգատար լինենք և կարողանանք բնականոն ընթացքը ապահովել՝ նպատակը սա է անկախ նրանից, թե որ տօրենը կլինի, որ կուսակցության անդամը կլինի, որ քաղաքական ուժի անդամը կլինի,

անկախ նրանից, եթե իրեն խնդիր է ներկայացվում և կարողություն ունի այդ խնդրին որոշակի առումով օգնելու, միշտ պատրաստակամ է համայնքի բնականոն աշխատանքը ապահովելուն ուղղված՝ իր ջանքերը ներդնելու:

Նարիա Մանուչարյանը նշեց, որ տպավորիչ է, որ Նելլի Խաչատրյանը լինելով Խաչատրյանի թիմի անդամ և այսօր այդ պաշտոնը զբաղեցնելով դիմել է պարոն Դավիթ Շահնազարյանին: Անկախ ամեն ինչից նշեց, որ ինքը խնդիրը ըմբռնում է և կողմ է քվեարկելու:

Հարցով հանդես եկավ ավագանու անդամ Կարեն Սիմոնյանը՝ նշելով թե ինչո՞վ է պայմանավորված գումարի չափը, մասնագետներն են հստակեցրել, օրինակ՝ պայմանական ինչու չէ մեկ միլիոն կամ յոթ հարյութ հազար, ինչպե՞ս է հաշվարկվել գումարի չափը:

Ի պատասխան հարցին Դավիթ Շահնազարյանը նշեց, որ սա նախնական գնահատական է և գնումների ընթացակարգին համապատասխան շարժվելու ընթացքում գուցեև փոփոխության ենթարկվի, մասնագետ հրավիրվել է ով մոտավոր գումար նշել է և հիմք է ընդունվել այդ մոտավոր գումարը, իսկ վերջնական գումարը բնականաբար կճշտվի արդեն գնման գործընթացի ընթացքում և գնման ընթասցքը կամակերպելու ժամանակ հստակ թիվ կներկայացվի և պարտադիր չէ բոլորովին, որ այս ութ հարյուր հազար դրամը ամբողջովին ծախսվի, կարող է դրա մի մասը ծախսվել, կարող է փոփոխության ենթարկվել: Առաջարկն այն է, որ նախնական նախատեսվի այս գումարը, բյուջում փոփոխություն կատարվի, այդ գումարն ուղղվի այնտեղ՝ որոշ մասը կծախսվի, բնականաբար կծախսվի ՀՈԱԿ-ի կարիքների համար, իսկ որը չի ծախսվի հետ կվերադառնա համայնքի բյուջե:
Կարեն Սիմոնյանը նշեց, որ հաշվարկներ կցվելու դեպքումավելի պարզ կլիներ, որին ի պատասխան Դավիթ Շահնազարյանը նշեց, որ ընդունում է առաջարկը, բայց քանի որ մոտավոր հաշվարկներ են կատարվել, վերջնական գնահատականը կորոշվի գնման ընթացակարգի վերաբերյալ:

Այլ հարցեր, առարկություններ և առաջարկություններ չեղան:

Համայնքի ղեկավարը հայտարարեց քվեարկություն:

Քվեարկության արդյունքում 21 կողմ, 0 դեմ, 0 ձեռնպահ ձայների հարաբերակցությամբ հարցն ընդունվեց:

Կողմ-21 Դեմ-0 Ձեռնպահ-0

Որոշումն ընդունված է. *(կցվում է որոշում N 73-Ն)*

<u>ԼՍԵՑԻՆ</u>

*ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ ՎԱՐԴԵՆԻՍ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ՀԵՐԹԱԿԱՆ ՆԻՍՏԻ ՕՐԱԿԱՐԳԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ*

*(Զեկ. ԱՀԱՐՈՆ ԽԱՉԱՏՐՅԱՆ)*

Ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 14-րդ հոդվածի դրույթներով՝ համայնքի ավագանին **որոշում է**.

Հաստատել՝ 2025 թվականի մայիսի 29-ին ժամը 14:00-ին կայանալիք Վարդենիս համայնքի ավագանու հերթական նիստի օրակարգը՝ բաղկացած 19 հարցից.

1.ՎԱՐԴԵՆԻՍ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ <<ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ ՎԱՐԴԵՆԻՍ ՀԱՄԱՅՆՔԻ 2025 ԹՎԱԿԱՆԻ ՏԱՐԵԿԱՆ ԲՅՈՒՋԵՆ ՔՆՆԱՐԿԵԼՈՒ ԵՎ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ>> 24 ՀՈՒՆՎԱՐԻ 2025 ԹՎԱԿԱՆԻ N 3-Ն ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ
2.ՎԱՐԴԵՆԻՍ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 24 ՀՈՒՆՎԱՐԻ 2025 ԹՎԱԿԱՆԻ «ՀՀ ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ ՎԱՐԴԵՆԻՍ ՀԱՄԱՅՆՔԻ ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՈՉ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ /ՀՈԱԿ-ՆԵՐ/ ԵՎ ԲՅՈՒՋԵՏԱՅԻՆ ՀԻՄՆԱՐԿՆԵՐԻ ԱՇԽԱՏԱԿԻՑՆԵՐԻ ԹՎԱՔԱՆԱԿԸ, ՀԱՍՏԻՔԱՑՈՒՑԱԿԸ ԵՎ ՊԱՇՏՈՆԱՅԻՆ ԴՐՈՒՅՔԱՉԱՓԵՐԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ» N 6-Ա ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ԼՐԱՑՈՒՄ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ:
3.ՀՀ ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ ՎԱՐԴԵՆԻՍ ՀԱՄԱՅՆՔԻ ՎԱՆԵՎԱՆ ԲՆԱԿԱՎԱՅՐՈՒՄ 5 ՄՎՏ ՀԶՈՐՈՒԹՅԱՄԲ ԱՐԵՎԱՅԻՆ ՖՈՏՈՎՈԼՏԱՅԻՆ ԷԼԵԿՏՐԱԿԱՅԱՆԻ ԿԱՌՈՒՑՄԱՆ ՆՊԱՏԱԿՈՎ ՆԱԽԱՏԵՎՈՂ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆԸ ՆԱԽՆԱԿԱՆ ՀԱՄԱՁԱՅՆՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ
4.ՎԱՐԴԵՆԻՍ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 07 ՀՈՒՆԻՍ 2022 ԹՎԱԿԱՆԻ «ՎԱՐԴԵՆԻՍ ՀԱՄԱՅՔՆԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ ՀՈՂԱՄԱՍԵՐԸ ՎԱՐՁԱԿԱԼՈՒԹՅԱՆ ԿԱՄ ԿԱՌՈՒՑԱՊԱՏՄԱՆ ԻՐԱՎՈՒՆՔՈՎ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՆՊԱՏԱԿՈՎ ՄՐՑՈՒՅԹՆԵՐԻ ԿԱԶՄԱԿԵՐՊՄԱՆ ՀԱՄԱՐ ՄՐՑՈՒԹԱՅԻՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ ՍՏԵՂԾԵԼՈՒ ՄԱՍԻՆ» N 53-Ա ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ:
5.ՎԱՐԴԵՆԻՍ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 29 ԱՊՐԻԼԻ 2025 ԹՎԱԿԱՆԻ «ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ ՎԱՐԴԵՆԻՍ ՀԱՄԱՅՆՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ ՀՈՂԱՄԱՍԻՑ <<ԼՈՒԹ ՄԱՐ>> ՍՊԸ-ԻՆ ՍԱՀՄԱՆԱՓԱԿ ՕԳՏՎԵԼՈՒ ԻՐԱՎՈՒՆՔ (ՍԵՐՎԻՏՈՒՏ) ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՀԱՄԱՁԱՅՆՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ» N 65-Ա ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ:
6.«ԱՍՏՂԱՎԱՐԴ» ՀԿ-Ի ԵՎ ՎԱՐԴԵՆԻՍԻ ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆԻ ՄԻՋԵՎ 08.04. 2023 ԹՎԱԿԱՆԻՆ ԿՆՔՎԱԾ ԵՐԿՈՒ ՄԻԿՐՈԱՎՏՈԲՈՒՍԻ ՍՊԱՍԱՐԿՈՒՄ ԱՆՀԱՏՈՒՅՑ ԻՐԱԿԱՆԱՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԺԱՄԿԵՏԸ ԵՐԿԱՐԱՁԳԵԼՈՒ ԹՈՒՅԼՏՎՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ:
7.ՎԱՐԴԵՆԻՍ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՐՓՈՒՆՔ ԲՆԱԿԱՎԱՅՐԻ ԽՄԵԼՈՒ ՋՐԻ ՋՐԱԳԾԻ ԱՐՏԱՔԻՆ ԵՎ ՆԵՐՔԻՆ ՑԱՆՑԻ ԿԱՌՈՒՑՄԱՆ ՇԻՆԱՐԱՐԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ՀԱՄԱՐ ՀԱՄԱՅՆՔԻ ԲՅՈՒՋԵԻՑ ԳՈՒՄԱՐ ՀԱՏԿԱՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ:
8.ՀՀ ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ ՎԱՐԴԵՆԻՍ ՀԱՄԱՅՆՔԻ ՀԱՆՐԱԿՐԹԱԿԱՆ ԴՊՐՈՑՆԵՐԻ 2024-2025 ԹՎԱԿԱՆՆԵՐԻ ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՏԱՐՎԱ ՇՐՋԱՆԱՎԱՐՏՆԵՐԻՆ, «ՎԱՐԴԵՆԻՍԻ «ԲԱՂՏՅԱՆ» ՊԵՏԱԿԱՆ ՔՈԼԵՋ» ՊՈԱԿ-ԻՆ ԵՎ «ՎԱՐԴԵՆԻՍԻ ԲԺՇԿԱ-ՀՈՒՄԱՆԻՏԱՐ ՔՈԼԵՋ» ՍՊԸ-ԻՆ ՄԻԱՆՎԱԳ ԳՈՒՄԱՐ ՀԱՏԿԱՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ:
9.ՎԱՐԴԵՆԻՍ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՐՓՈՒՆՔ ԲՆԱԿԱՎԱՅՐԻ ԲՆԱԿԻՉ ԱՐՄԵՆ ՌԱԶՄԻԿԻ ՁԱԽԱՐՅԱՆԻՆ ՊԱՏԿԱՆՈՂ ՎԱԶ 2121 ՄԱԿՆԻՇԻ 34FV123 ՊԵՏՀԱՄԱՐԱՆԻՇԻ

ԱՎՏՈՄԵՔԵՆԱՅԻ ԳՈՒՅՔԱՀԱՐԿԻ ԿՈՒՏԱԿՎԱԾ ԱՊԱՌՔԸ ՕՐԵՆՔՈՎ ՍԱՀՄԱՆՎԱԾ ԿԱՐԳՈՎ ՄԱՍՆԱԿԻ ԶԻՋԵԼՈՒ ՄԱՍԻՆ:
10.ՎԱՐԴԵՆԻՍ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՅՐՔ ԲՆԱԿԱՎԱՅՐԻ ԲՆԱԿԻՉ ԱՐՏՅՈՄ ՄԱՆՈՒԿՅԱՆԻՆ ՊԱՏԿԱՆՈՂ MITSUBISHI PAJERO 3.5 ՄԱԿՆԻՇԻ 38MA800 ՊԵՏՀԱՄԱՐԱՆԻՇԻ ԱՎՏՈՄԵՔԵՆԱՅԻ ԳՈՒՅՔԱՀԱՐԿԻ ԿՈՒՏԱԿՎԱԾ ԱՊԱՌՔԸ ՕՐԵՆՔՈՎ ՍԱՀՄԱՆՎԱԾ ԿԱՐԳՈՎ ՄԱՍՆԱԿԻ ԶԻՋԵԼՈՒ ՄԱՍԻՆ:
11.ՎԱՐԴԵՆԻՍ ՀԱՄԱՅՆՔԻ ԲՆԱԿԻՉ ՆԱԻՐԱ ԱՌՈՒՍՏԱՄՅԱՆԻՆ ՊԱՏԿԱՆՈՂ MERCEDES-BENZ C 280 ՄԱԿՆԻՇԻ 36GF081 ՊԵՏՀԱՄԱՐԱՆԻՇԻ ԱՎՏՈՄԵՔԵՆԱՅԻ ԳՈՒՅՔԱՀԱՐԿԻ ԿՈՒՏԱԿՎԱԾ ԱՊԱՌՔԸ ՕՐԵՆՔՈՎ ՍԱՀՄԱՆՎԱԾ ԿԱՐԳՈՎ ՄԱՍՆԱԿԻ ԶԻՋԵԼՈՒ ՄԱՍԻՆ:
12.ՎԱՐԴԵՆԻՍ ՀԱՄԱՅՆՔԻ ԾՈՎԱԿ ԲՆԱԿԱՎԱՅՐԻ ԲՆԱԿԻՉ ՎԱԶԳԱՆ ՆԻԿՈՂՈՍՅԱՆԻՆ ՊԱՏԿԱՆՈՂ VAZ 21074 ՄԱԿՆԻՇԻ 35NL101 ՊԵՏՀԱՄԱՐԱՆԻՇԻ ԱՎՏՈՄԵՔԵՆԱՅԻ ԳՈՒՅՔԱՀԱՐԿԻ ԿՈՒՏԱԿՎԱԾ ԱՊԱՌՔԸ ՕՐԵՆՔՈՎ ՍԱՀՄԱՆՎԱԾ ԿԱՐԳՈՎ ՄԱՍՆԱԿԻ ԶԻՋԵԼՈՒ ՄԱՍԻՆ:
13.ՎԱՐԴԵՆԻՍ ՀԱՄԱՅՆՔԻ ԾՈՎԱԿ ԲՆԱԿԱՎԱՅՐԻ ԲՆԱԿԻՉ ԱՆԴՐԱՆԻԿ ԵՂԻԱԶԱՐՅԱՆԻՆ ՊԱՏԿԱՆՈՂ VAZ 21074-120-21. ՄԱԿՆԻՇԻ 34ZU402 ՊԵՏՀԱՄԱՐԱՆԻՇԻ ԱՎՏՈՄԵՔԵՆԱՅԻ ԳՈՒՅՔԱՀԱՐԿԻ ԿՈՒՏԱԿՎԱԾ ԱՊԱՌՔԸ ՕՐԵՆՔՈՎ ՍԱՀՄԱՆՎԱԾ ԿԱՐԳՈՎ ՄԱՍՆԱԿԻ ԶԻՋԵԼՈՒ ՄԱՍԻՆ:
14.ՎԱՐԴԵՆԻՍ ՀԱՄԱՅՆՔԻ ՎԱՐԴԵՆԻՍ ՔԱՂԱՔԻ ԲՆԱԿԻՉ ՄՀԵՐ ԱՂԱՔԱՆՅԱՆԻՆ ՊԱՏԿԱՆՈՂ VOLVO 740 ՄԱԿՆԻՇԻ 35LO091 ՊԵՏՀԱՄԱՐԱՆԻՇԻ ԱՎՏՈՄԵՔԵՆԱՅԻ ԳՈՒՅՔԱՀԱՐԿԻ ԿՈՒՏԱԿՎԱԾ ԱՊԱՌՔԸ ՕՐԵՆՔՈՎ ՍԱՀՄԱՆՎԱԾ ԿԱՐԳՈՎ ՄԱՍՆԱԿԻ ԶԻՋԵԼՈՒ ՄԱՍԻՆ:
15.ՀԱՅԱՍՏԱՆԻ ԴՅՈՒՑԱԶՆԱԳՐՔԻ ԿՐԿՆԱԿԻ ՌԵԿՈՐԴԱԿԻՐ ՄԱՐԳԱՐԻՏԱ ԳԱՐԻԿԻ ՄԻՆԱՍՅԱՆԻՆ ԽՐԱԽՈՒՍԵԼՈՒ ՄԱՍԻՆ:
16.ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ ՎԱՐԴԵՆԻՍ ՀԱՄԱՅՆՔՈՒՄ ՏԵՂԻ ՈՒՆԵՑԱԾ ՔԱՄՈՒ ՀԵՏԵՎԱՆՔՈՎ ՆՅՈՒԹԱԿԱՆ ՎՆԱՍ ԿՐԱԾ ԲՆԱԿԻՉՆԵՐԻՆ ԴՐԱՄԱԿԱՆ ՓՈԽՀԱՏՈՒՑՈՒՄ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ:
17.ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ ՎԱՐԴԵՆԻՍ ՀԱՄԱՅՆՔԻ ՍՈՑԻԱԼԱՊԵՍ ԱՆԱՊԱՀՈՎ ԲՆԱԿԻՉՆԵՐԻ ԴԻՄՈՒՄՆԵՐԻ ՔՆՆԱՐԿՄԱՆ ԵՎ ԴՐԱՄԱԿԱՆ ՓՈԽՀԱՏՈՒՑՈՒՄ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ:
18.ՎԱՐԴԵՆԻՍ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ <<ՎԱՐԴԵՆԻՍ ՀԱՄԱՅՆՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ ՎԱՐԴԵՆԻՍ ՔԱՂԱՔԻ ԵՎ ԴԱՐԱՆԱԿ ԲՆԱԿԱՎԱՅՐԻ ՀՈՂԱՄԱՍԵՐԸ ԱՃՈՒՐԴ-ՎԱՃԱՌՔՈՎ ՕՏԱՐԵԼՈՒ ԹՈՒՅԼՏՎՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ԵՎ ՄԵԿՆԱՐԿԱՅԻՆ ԳՆԵՐ ՍԱՀՄԱՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ>> 29 ԱՊՐԻԼԻ 2025 ԹՎԱԿԱՆԻ N 61-Ա ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ:
19.ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ ՎԱՐԴԵՆԻՍ ՀԱՄԱՅՆՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ ՎԱՐԴԵՆԻՍ ՀԱՄԱՅՆՔԻ ՓՈՔՐ ՄԱՍՐԻԿ ԲՆԱԿԱՎԱՅՐԵՐԻ ՀՈՂԵՐԻՑ ՈՒՂՂԱԿԻ ՎԱՃԱՌՔՈՎ ՎԱՐԴԱՆ ԳՈՒՐԳԵՆԻ ՄԱՐԳԱՐՅԱՆԻՆ ԸՆԴԼԱՅՆՄԱՆ ՆՊԱՏԱԿՈՎ ՀՈՂԱՏԱՐԱԾՔ ՕՏԱՐԵԼՈՒ ԵՎ ՕՏԱՐՄԱՆ ԳԻՆ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ:

2025 թվականի մայիսի 29-ին ժամը 14:00-ին կայացավ Վարդենիս համայնքի ավագանու հերթական նիստը: Ավագանու 27 անդամներից նիստին ներկա էին 21-ը, բացակայում էին <<Քաղաքացիական պայմանագիր>> խմբակցության ավագանու անդամներ Արամ Մելքոնյանը և Արտակ Մանուկյանը, հարգելի բացակայում էին <<Քաղաքացիական պայմանագիր>> խմբակցության ավագանու անդամներ Հայկ

Երանոսյանը, Ռաֆայել Խչեյանը, Ռոմելյա Սարգսյանը և <<Աիարոն Խաչատրյան>> խմբակցության ավագանու անդամ Աշոտ Խաչատրյանը: Նիստը իրավազոր է: Նիստը վարում է համայնքի ղեկավար Աիարոն Խաչատրյանը: Նիստի օրակարգը բաղկացած է 17 հարցից:

2025 թվականի ապրիլի 30-ին Վարդենիս համայնքի ավագանու արդեն նախկին անդամ Նելլի Ժորայի Խաչատրյանը համայնքապետարան է ներկայացրել ավագանու անդամի լիազորությունները վաղաժամկետ դադարեցնելու միջնորդության մասին դիմում, որը սահմանված կարգով ներկայացվել է ՀՀ թիվ 21 ընտրատարածքային ընտրական հանձնաժողով և համաձայն հանձնաժողովի 15 մայիսի 2025 թվականի N2 արձանագրության՝ Վարդենիս համայնքի ավագանու <<Աիարոն Խաչատրյան>> կուսակցությունների դաշինքի ընտրական ցուցակից ընտրված և լիազորությունները վաղաժամկետ դադարած ավագանու անդամի մանդատը տրվել է <<Աիարոն Խաչատրյան>> կուսակցությունների դաշինքի ընտրական ցուցակի հերթական հաջորդ կին թեկնածու Նինա Անդրանիկի Ղարիբյանին:

Մեր խորին շնորհակալությունն ենք հայտնում Նելլի Խաչատրյանին՝ արդյունավետ աշխատանքի համար, իսկ Նինա Ղարիբյանին՝ մաղթում բեղմնավոր աշխատանք:

Համայնքի ղեկավարը ընթերցեց օրակարգում ընդգրկված հարցերը՝ ըստ հերթականության:

1.ՎԱՐԴԵՆԻՍ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ <<ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ ՎԱՐԴԵՆԻՍ ՀԱՄԱՅՆՔԻ 2025 ԹՎԱԿԱՆԻ ՏԱՐԵԿԱՆ ԲՅՈՒՋԵՆ ՔՆՆԱՐԿԵԼՈՒ ԵՎ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ>> 24 ՀՈՒՆՎԱՐԻ 2025 ԹՎԱԿԱՆԻ N 3-Ն ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ
2.ՎԱՐԴԵՆԻՍ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 24 ՀՈՒՆՎԱՐԻ 2025 ԹՎԱԿԱՆԻ «ՀՀ ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ ՎԱՐԴԵՆԻՍ ՀԱՄԱՅՆՔԻ ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՈՉ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ /ՀՈԱԿ-ՆԵՐ/ ԵՎ ԲՅՈՒՋԵՏԱՅԻՆ ՀԻՄՆԱՐԿՆԵՐԻ ԱՇԽԱՏԱԿԻՑՆԵՐԻ ԹՎԱՔԱՆԱԿԸ, ՀԱՍՏԻՔԱՑՈՒՑԱԿԸ ԵՎ ՊԱՇՏՈՆԱՅԻՆ ԴՐՈՒՅՔԱՉԱՓԵՐԸ ՀԱՄՏԱՍՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ» N 6-Ա ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ԼՐԱՑՈՒՄ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ:
3.ՀՀ ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ ՎԱՐԴԵՆԻՍ ՀԱՄԱՅՆՔԻ ՎԱՆԵՎԱՆ ԲՆԱԿԱՎԱՅՐՈՒՄ 5 ՄՎՏ ՀԶՈՐՈՒԹՅԱՄԲ ԱՐԵՎԱՅԻՆ ՖՈՏՈՎՈԼՏԱՅԻՆ ԷԼԵԿՏՐԱԿԱՅԱՆԻ ԿԱՌՈՒՑՄԱՆ ՆՊԱՏԱԿՈՎ ՆԱԽԱՏԵՎՈՂ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆԸ ՆԱԽՆԱԿԱՆ ՀԱՄԱՁԱՅՆՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ
4.ՎԱՐԴԵՆԻՍ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 07 ՀՈՒՆԻՍ 2022 ԹՎԱԿԱՆԻ «ՎԱՐԴԵՆԻՍ ՀԱՄԱՅՔՆԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ ՀՈՂԱՄԱՍԵՐԸ ՎԱՐՁԱԿԱԼՈՒԹՅԱՆ ԿԱՄ ԿԱՌՈՒՑԱՊԱՏՄԱՆ ԻՐԱՎՈՒՆՔՈՎ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՆՊԱՏԱԿՈՎ ՄՐՑՈՒՅԹՆԵՐԻ ԿԱԶՄԱԿԵՐՊՄԱՆ ՀԱՄԱՐ ՄՐՑՈՒԹԱՅԻՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ ՍՏԵՂԾԵԼՈՒ ՄԱՍԻՆ» N 53-Ա ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ:
5.ՎԱՐԴԵՆԻՍ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 29 ԱՊՐԻԼԻ 2025 ԹՎԱԿԱՆԻ «ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ ՎԱՐԴԵՆԻՍ ՀԱՄԱՅՆՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ ՀՈՂԱՄԱՍԻՑ <<ԼՈՒԹ ՄԱՐ>>

ՍՊԸ-ԻՆ ՍԱՀՄԱՆԱՓԱԿ ՕԳՏՎԵԼՈՒ ԻՐԱՎՈՒՆՔ (ՍԵՐՎԻՏՈՒՏ) ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՀԱՄԱՁԱՅՆՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ» N 65-Ա ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ:

6.«ԱՍՏՂԱՎԱՐԴ» ՀԿ-Ի ԵՎ ՎԱՐԴԵՆԻՍԻ ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆԻ ՄԻՋԵՎ 08.04. 2023 ԹՎԱԿԱՆԻ ԿՆՔՎԱԾ ԵՐԿՈՒ ՄԻԿՐՈԱՎՏՈԲՈՒՍԻ ՍՊԱՍԱՐԿՈՒՄՆ ԱՆՀԱՏՈՒՅՑ ԻՐԱԿԱՆԱՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԺԱՄԿԵՏԸ ԵՐԿԱՐԱՁԳԵԼՈՒ ԹՈՒՅԼՏՎՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ:

7.ՎԱՐԴԵՆԻՍ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՐՓՈՒՆՔ ԲՆԱԿԱՎԱՅՐԻ ԽՄԵԼՈՒ ՋՐԻ ՋՐԱԳԾԻ ԱՐՏԱՔԻՆ ԵՎ ՆԵՐՔԻՆ ՑԱՆՑԻ ԿԱՌՈՒՑՄԱՆ ՇԻՆԱՐԱՐԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ՀԱՄԱՐ ՀԱՄԱՅՆՔԻ ԲՅՈՒՋԵԻՑ ԳՈՒՄԱՐ ՀԱՏԿԱՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ:

8.ՀՀ ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ ՎԱՐԴԵՆԻՍ ՀԱՄԱՅՆՔԻ ՀԱՆՐԱԿՐԹԱԿԱՆ ԴՊՐՈՑՆԵՐԻ 2024-2025 ԹՎԱԿԱՆՆԵՐԻ ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՏԱՐՎԱ ՇՐՋԱՆԱՎԱՐՏՆԵՐԻՆ, «ՎԱՐԴԵՆԻՍԻ «ԲԱԳՐԱՏ ԲԱԴԵՅԱՆ» ՊԵՏԱԿԱՆ ՔՈԼԵՋ» ՊՈԱԿ-ԻՆ ԵՎ «ՎԱՐԴԵՆԻՍԻ ԲԺՇԿԱ-ՀՈՒՄԱՆԻՏԱՐ ՔՈԼԵՋ» ՍՊԸ-ԻՆ ՄԻԱՆՎԱԳ ԳՈՒՄԱՐ ՀԱՏԿԱՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ:

9.ՎԱՐԴԵՆԻՍ ՀԱՄԱՅՆՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ ՀՈՂԱՄԱՍԸ ԱՃՈՒՐԴ-ՎԱՃԱՌՔՈՎ ՕՏԱՐԵԼՈՒ ԹՈՒՅԼՏՎՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ԵՎ ՄԵԿՆԱՐԿԱՅԻՆ ԳԻՆ ՍԱՀՄԱՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ:

10.ՎԱՐԴԵՆԻՍ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՅՐՔ ԲՆԱԿԱՎԱՅՐԻ ԲՆԱԿԻՉ ԱՐՏՅՈՄ ՄԱՆՈՒԿՅԱՆԻՆ ՊԱՏԿԱՆՈՂ MITSUBISHI PAJERO 3.5 ՄԱԿՆԻՇԻ 38MA800 ՊԵՏՀԱՄԱՐԱՆԻՇԻ ԱՎՏՈՄԵՔԵՆԱՅԻ ԳՈՒՅՔԱՀԱՐԿԻ ԿՈՒՏԱԿՎԱԾ ԱՊԱՌՔԸ ՕՐԵՆՔՈՎ ՍԱՀՄԱՆՎԱԾ ԿԱՐԳՈՎ ՄԱՍՆԱԿԻ ԶԻՋԵԼՈՒ ՄԱՍԻՆ:

11.ՎԱՐԴԵՆԻՍ ՀԱՄԱՅՆՔԻ ԲՆԱԿԻՉ ՆԱԻՐԱ ԱՌՈՒՍՏԱՄՅԱՆԻՆ ՊԱՏԿԱՆՈՂ MERCEDES-BENZ C 280 ՄԱԿՆԻՇԻ 36GF081 ՊԵՏՀԱՄԱՐԱՆԻՇԻ ԱՎՏՈՄԵՔԵՆԱՅԻ ԳՈՒՅՔԱՀԱՐԿԻ ԿՈՒՏԱԿՎԱԾ ԱՊԱՌՔԸ ՕՐԵՆՔՈՎ ՍԱՀՄԱՆՎԱԾ ԿԱՐԳՈՎ ՄԱՍՆԱԿԻ ԶԻՋԵԼՈՒ ՄԱՍԻՆ:

12.ՎԱՐԴԵՆԻՍ ՀԱՄԱՅՆՔԻ ԾՈՎԱԿ ԲՆԱԿԱՎԱՅՐԻ ԲՆԱԿԻՉ ՎԱՉԱԳԱՆ ՆԻԿՈՂՈՍՅԱՆԻՆ ՊԱՏԿԱՆՈՂ VAZ 21074 ՄԱԿՆԻՇԻ 35NL101 ՊԵՏՀԱՄԱՐԱՆԻՇԻ ԱՎՏՈՄԵՔԵՆԱՅԻ ԳՈՒՅՔԱՀԱՐԿԻ ԿՈՒՏԱԿՎԱԾ ԱՊԱՌՔԸ ՕՐԵՆՔՈՎ ՍԱՀՄԱՆՎԱԾ ԿԱՐԳՈՎ ՄԱՍՆԱԿԻ ԶԻՋԵԼՈՒ ՄԱՍԻՆ:

13.ՎԱՐԴԵՆԻՍ ՀԱՄԱՅՆՔԻ ԾՈՎԱԿ ԲՆԱԿԱՎԱՅՐԻ ԲՆԱԿԻՉ ԱՆԴՐԱՆԻԿ ԵՂԻԱԶԱՐՅԱՆԻՆ ՊԱՏԿԱՆՈՂ VAZ 21074-120-21. ՄԱԿՆԻՇԻ 34ZU402 ՊԵՏՀԱՄԱՐԱՆԻՇԻ ԱՎՏՈՄԵՔԵՆԱՅԻ ԳՈՒՅՔԱՀԱՐԿԻ ԿՈՒՏԱԿՎԱԾ ԱՊԱՌՔԸ ՕՐԵՆՔՈՎ ՍԱՀՄԱՆՎԱԾ ԿԱՐԳՈՎ ՄԱՍՆԱԿԻ ԶԻՋԵԼՈՒ ՄԱՍԻՆ:

14.ՎԱՐԴԵՆԻՍ ՀԱՄԱՅՆՔԻ ՎԱՐԴԵՆԻՍ ՔԱՂԱՔԻ ԲՆԱԿԻՉ ՄՀԵՐ ԱՂԱՋԱՆՅԱՆԻՆ ՊԱՏԿԱՆՈՂ VOLVO 740 ՄԱԿՆԻՇԻ 35LO091 ՊԵՏՀԱՄԱՐԱՆԻՇԻ ԱՎՏՈՄԵՔԵՆԱՅԻ ԳՈՒՅՔԱՀԱՐԿԻ ԿՈՒՏԱԿՎԱԾ ԱՊԱՌՔԸ ՕՐԵՆՔՈՎ ՍԱՀՄԱՆՎԱԾ ԿԱՐԳՈՎ ՄԱՍՆԱԿԻ ԶԻՋԵԼՈՒ ՄԱՍԻՆ:

15.ՀԱՅԱՍՏԱՆԻ ԴՅՈՒՑԱԶՆԱԳՐՔԻ ԿՐԿՆԱԿԻ ՌԵԿՈՐԴԱԿԻՐ ՄԱՐԳԱՐԻՏԱ ԳԱՐԻԿԻ ՄԻՆԱՍՅԱՆԻՆ ԽՐԱԽՈՒՍԵԼՈՒ ՄԱՍԻՆ:

16.ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ ՎԱՐԴԵՆԻՍ ՀԱՄԱՅՆՔՈՒՄ ՏԵՂԻ ՈՒՆԵՑԱԾ ՔԱՄՈՒ ՀԵՏԵՎԱՆՔՈՎ ՆՅՈՒԹԱԿԱՆ ՎՆԱՍ ԿՐԱԾ ԲՆԱԿԻՉՆԵՐԻՆ ԴՐԱՄԱԿԱՆ ՓՈԽՀԱՏՈՒՑՈՒՄ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

17.ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ ՎԱՐԴԵՆԻՍ ՀԱՄԱՅՆՔԻ ՍՈՑԻԱԼԱՊԵՍ ԱՆԱՊԱՀՈՎ ԲՆԱԿԻՉՆԵՐԻ ԴԻՄՈՒՄՆԵՐԻ ՔՆՆԱՐԿՄԱՆ ԵՎ ԴՐԱՄԱԿԱՆ ՓՈԽՀԱՏՈՒՑՈՒՄ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ:

Ներկայացված օրակարգերում համայնքի ղեկավարը առաջարկեց կատարել փոփոխություն՝ օրակարգի 9-րդ <<ՎԱՐԴԵՆԻՍ ՀԱՄԱՅՆՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ ՀՈՂԱՄԱՍԸ ԱՃՈՒՐԴ-ՎԱՃԱՌՔՈՎ ՕՏԱՐԵԼՈՒ ԹՈՒՅԼՏՎՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ԵՎ ՄԵԿՆԱՐԿԱՅԻՆ ԳԻՆ ՍԱՀՄԱՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ>> հարցը համայնքի ղեկավարը առաջարկեց փոխարինել, քանի որ կառավարության որոշմամբ փոխվել է աճուրդ-վաճառքներ իրականացնելու կարգը՝ կադաստրային արժեքի փոխարեն իրականացվելու է գնահատում լիցենզավորված անկախ կազմակերպության կողմից, համայնքի ղեկավարը ընթերցեց Տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարության կողմից ուղարկված գրությունը՝ հողերի աճուրդ-վաճառքի կարգի փոփոխության վերաբերյալ: Համայնքի ղեկավարը նշեց, որ 9-րդ հարցի փոխարեն օրակարգում անհրաժեշտ է ընդգրկել ՎԱՐԴԵՆԻՍ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՐՓՈՒՆՔ ԲՆԱԿԱՎԱՅՐԻ ԲՆԱԿԻՉ ԱՐՄԵՆ ՌԱԶՄԻԿԻ ՉԱԽԱՐՅԱՆԻՆ ՊԱՏԿԱՆՈՂ ՎԱԶ 2121 ՄԱԿՆԻՇԻ 34FV123 ՊԵՏՀԱՄԱՐԱՆԻՇԻ ԱՎՏՈՄԵՔԵՆԱՅԻ ԳՈՒՅՔԱՀԱՐԿԻ ԿՈՒՏԱԿՎԱԾ ԱՊԱՌՔԸ ՕՐԵՆՔՈՎ ՍԱՀՄԱՆՎԱԾ ԿԱՐԳՈՎ ՄԱՍՆԱԿԻ ՁԻՋԵԼՈՒ ՄԱՍԻՆ հարցը և վերջում 17-րդ հարցից հետո ավելացնել ևս երկուսը՝ <<ՎԱՐԴԵՆԻՍ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ <<ՎԱՐԴԵՆԻՍ ՀԱՄԱՅՆՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ ՎԱՐԴԵՆԻՍ ՔԱՂԱՔԻ ԵՎ ԴԱՐԱՆԱԿ ԲՆԱԿԱՎԱՅՐԻ ՀՈՂԱՄԱՍԵՐԸ ԱՃՈՒՐԴ-ՎԱՃԱՌՔՈՎ ՕՏԱՐԵԼՈՒ ԹՈՒՅԼՏՎՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ԵՎ ՄԵԿՆԱՐԿԱՅԻՆ ԳՆԵՐ ՍԱՀՄԱՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ>> 29 ԱՊՐԻԼԻ 2025 ԹՎԱԿԱՆԻ N 61-Ա ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ>> հարցը և <<ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ ՎԱՐԴԵՆԻՍ ՀԱՄԱՅՆՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ ՎԱՐԴԵՆԻՍ ՀԱՄԱՅՆՔԻ ՓՈՔՐ ՄԱՍՐԻԿ ԲՆԱԿԱՎԱՅՐԵՐԻ ՀՈՂԵՐԻՑ ՈՒՂՂԱԿԻ ՎԱՃԱՌՔՈՎ ՎԱՐԴԱՆ ԳՈՒՐԳԵՆԻ ՄԱՐԳԱՐՅԱՆԻՆ ԸՆԴԼԱՅՆՄԱՆ ՆՊԱՏԱԿՈՎ ՀՈՂԱՏԱՐԱԾՔ ՕՏԱՐԵԼՈՒ ԵՎ ՕՏԱՐՄԱՆ ԳԻՆ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ>> հարցը: Համայնքի ղեկավարը հայտարարեց քվեարկություն, առարկություններ և առաջարկություններ չեղան: 21 կողմ, 0 դեմ, 0 ձեռնպահ ձայների հարաբերակցությամբ օրակարգը հաստատվեց փոփոխությամբ՝ բաղկացած 19 հարցից:

Կողմ-21 Դեմ-0 Ձեռնպահ-0

Որոշումն ընդունված է. *(կցվում է որոշում N 72-Ա)*

Ավագանու անդամներ

ԱՐՄԻՆԵ ԱՂԱՋԱՆՅԱՆ

ԱՐՈՒՍՅԱԿ ԱՎԵՏԻՍՅԱՆ

ՎԱՐՈՒԺԱՆ ԱՎԵՏԻՍՅԱՆ

ՀԱՄԼԵՏ ԲԱԶՈՅԱՆ

ԱՇՈՏ ԳՐԻԳՈՐՅԱՆ

ՄԵԼԱՆՅԱ ԵՓՐԵՄՅԱՆ

ԱՀԱՐՈՆ ԽԱՉԱՏՐՅԱՆ

ԱՐԱՔՍՅԱ ՀԱՅՐԱՊԵՏՅԱՆ

ՍՊԱՐՏԱԿ ՀՈՎՀԱՆԻՍՅԱՆ

ՆԻՆԱ ՂԱՐԻԲՅԱՆ

ԱՐՄԱՆ ՄԱԹԵՎՈՍՅԱՆ

ՆԱԻՐԱ ՄԱՆՈՒՉԱՐՅԱՆ

ՎԱՐԴԱՆ ՄԱՐԳԱՐՅԱՆ

ՍԱԹԵՆԻԿ ՄԻՆԱՍՅԱՆ

ԿԱՐԵՆ ՄԿՐՏՉՅԱՆ

ՄՈՒՇԵՂ ՇԱՔՈՅԱՆ

ԴԱՎԻԹ ՇԱՀՆԱԶԱՐՅԱՆ

ՋԱՎԵՆ ՇՀՈՅԱՆ

ԿԱՐԵՆ ՍԻՄՈՆՅԱՆ

ՍԵՎԱԿ ՍԻՄՈՆՅԱՆ

ՔԵՄԱՐԱ ՎԱՐԴԱՆՅԱՆ

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ԱՀԱՐՈՆ ԽԱՉԱՏՐՅԱՆ ____________

*Նիստն արձանագրեց՝* Կամո Զարոյան ______________